

«Գրանցված է»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«24» մայիսի 2013 թ.
Պետական գրանցման համարը 1041364
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» մայիսի 2013թ.

N 55-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԿՈՆՅԱԿԻ
ՍՊԻՐՏՆԵՐԻ, ՍՊԻՐՏԱՎՈՐՎԱԾ ՋՐԵՐԻ ԵՎ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍԻԻ
(ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍԻԻ) ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 245 որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների փաստացի կորստի (բնական կորստի) չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետին՝

1) սույն հրամանի 1-ին կետով սահմանված չափերը եռօրյա ժամկետում ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն՝ համաձայնեցման.

2) սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Բաղդասարյանին:

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Համաձայնեցված է
Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր հարկային պետական
ծառայության պետ
_____ Ա. ԲԱԼԱՅԱՆ
16 մայիսի 2013թ.

Հավելված
Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2013 թվականի մայիսի 13-ի
N 55-Ն հրամանի

Չ Ա Փ Ե Ր
ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԿՈՆՅԱԿԻ
ՍՊԻՐՏՆԵՐԻ, ՍՊԻՐՏԱՎՈՐՎԱԾ ՋՐԵՐԻ ԵՎ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍԻՏ
(ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍԻՏ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմատիվ իրավական ակտը սահմանվում է կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների պահպանման, հասունացման, հարստացման և տեղափոխման ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային չափերը:

2. Կոնյակի սպիրտի, սպիրտավորված ջրի և կոնյակի բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև պահպանման ժամանակ կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների որակական ու քանակական պարամետրերի փոփոխություններից (պակասորդից) առաջացած կորուստների:

3. Բնական կորուստներին չեն դասվում կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների պահպանման հասունացման, հարստացման և տեղափոխման ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

4. Բնական կորուստները արձանագրվում են և ենթակա են դուրսգրման սահմանված կարգով իրականացված գույքագրումների արդյունքների փաստացի տարբերությունների չափով, բայց ոչ ավելի, քան թույլատրելի սահմանային չափերը:

II. ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ, ՍՊԻՐՏԱՎՈՐՎԱԾ ՋՐԵՐԻ ԵՎ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍԻՏ
(ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍԻՏ) ՉԱՓԵՐԸ

5. Կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների բնական կորուստի չափերը պահպանման և հասունացման ընթացքում հաշվարկվում են դրանց մեջ պարունակվող ջրազուրկ սպիրտի միջին ամսական քանակից (ծավալից): Ամսվա նորմատիվ կորուստները որոշվում են տարեկան չափերը բաժանելով 12-ի: Պահպանման և հասունացման պրոցեսում գտնվող կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների միջին ամսական քանակը որոշվում է մեկ ամսվա օրական մնացորդների գումարը բաժանելով ամսվա օրերի քանակին:

6. Կոնյակի սպիրտների առաջին և երկրորդ տարվա պահպանման և հասունացման ընթացքում ընդունված բնական կորուստների չափերը բոլոր տեսակի տարաներում նվազում են երրորդ տարվա հասունացման համար 5%-ի, իսկ չորրորդ տարվա հասունացման համար 10%-ի չափով: Հետագա տարիների հասունացման բնական կորուստները պահպանվում են չորրորդ տարվա կորուստի չափով:

7. Կաղնե տակառներում կոնյակի սպիրտների և սպիրտավորված ջրերի առաջին և երկրորդ տարվա պահպանման և հասունացման ընթացքում առաջացող բնական կորուստների չափերը (%-ներով՝ կոնյակի սպիրտներում, սպիրտավորված ջրերում պարունակվող ջրազուրկ սպիրտի ընդհանուր քանակի նկատմամբ) կազմում են՝

1) մինչև 70 դալ տարողությամբ տակառներում՝ 4,2%.

2) 70-150 դալ տարողությամբ տակառներում՝ 2,8%.

3) 150 դալ և ավելի տարողությամբ տակառներում՝ 2,5%.

4) բացօթյա պայմաններում մինչև 120 դալ տարողությամբ տակառներում՝ 7,0%:

8. Պահպանման և հասունացման ընթացքում կաղնե տակառներում կոնյակի սպիրտների և սպիրտավորված ջրերի ներծծման բնական կորուստների չափերը (%-ներով՝ կոնյակի սպիրտներում, սպիրտավորված ջրերում պարունակվող ջրազուրկ սպիրտի ընդհանուր քանակի նկատմամբ) կազմում են՝

1) տակառներում, որոնք չեն օգտագործվել կոնյակի սպիրտի կամ կոնյակի համար*՝ 1,2 %.

2) տակառներում որոնք օգտագործվել են կոնյակի սպիրտի կամ կոնյակի համար**՝ 0,5%.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*) Նշված չափերը միանգամյա են, կիրառվում են տակառներում կոնյակի սպիրտի և սպիրտավորված ջրերի լցման ժամանակ և ներծծման արդյունք են:

**) Նոր, չօգտագործված տարողությունների թվին են պատկանում այն տակառները, որոնց տակառատախտակից կորզվել է սպիրտը և որոնք չորս ամսից ավելի եղել են դատարկ:

Կոնյակի սպիրտի կամ կոնյակի համար օգտագործված են համարվում այն տարողությունները, որոնք դատարկվել են կոնյակի սպիրտից կամ կոնյակից ոչ ավելի, քան չորս ամսվա ընթացքում:

9. Մետաղյա պահամաններում կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոլերի առաջին և երկրորդ տարվա պահպանման և հասունացման ընթացքում առաջացող բնական կորուստները (հաշված այն պահից, երբ կոնյակի սպիրտը թորելուց հետո լցվել է տարաների մեջ, %-ներով կոնյակի սպիրտներում, սպիրտավորված ջրերում և կոլերում պարունակող ջրազուրկ սպիրտի նկատմամբ) կազմում են 0,65%:

10. Թթվածնով կոնյակի սպիրտի հարստացման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը կազմում են տարողությունների մեջ գտնվող ջրազուրկ սպիրտի քանակի 0,1%-ից ոչ ավելի:

11. Արձնապատ մետաղյա պահամաններում կոնյակի սպիրտների կաղնե տակառատախտակներում ներծծման բնական կորուստների չափերը կազմում են՝

1) առաջին լցման ընթացքում կոնյակի սպիրտների կորուստների չափերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$L = P \times 0,55\%$$

որտեղ՝

L- սպիրտի կորուստն է (ջրազուրկ սպիրտ, լիտր)

P- բացարձակ չոր տակառատախտակների քաշը (կգ)

0,55- 1 կգ բացարձակ չոր տակառատախտակներում ներծծվող սպիրտի քանակը (ջ.ս.լ),

2) երկրորդ և դրան հաջորդող լցման ընթացքում կոնյակի սպիրտների կորուստների չափերը կազմում են տարողություններում առկա ջրազուրկ սպիրտի քանակի 0,4%-ը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Տակառատախտակների բացարձակ չոր քաշը որոշվում է 105° C ջերմաստիճանի պայմաններում տակառատախտակների 3-ից ոչ պակաս նմուշի մոտ 100 գրամ զանգվածը հաստատուն քաշի հասցնելով:

12. Կոնյակների պահպանման և հասունացման ընթացքում առաջացող բնական կորուստների չափերը (%-ներով՝ մեկ տարվա համար հաշվարկված կոնյակում պարունակվող ջրազուրկ սպիրտի նկատմամբ) կազմում են՝

1) մինչև 150 դալ տարողությամբ կաղնե տակառներում՝ 2,5%.

2) 150 դալից ավելի դալ տարողությամբ կաղնե տակառներում՝ 2,0%.

3) արծնապատ մետաղյա պահամաններում՝ 0,5%:

13. Կոնյակների ներծծումը (%-ներով՝ կոնյակում պարունակող ջրազուրկ սպիրտի նկատմամբ) փայտանյութում ետկուպաժային պահպանման և հասունացման ընթացքում կազմում են՝

1) նախկինում կոնյակով լցված տակառներում (бочка)՝ 0,2%.

2) նախկինում կոնյակով լցված տակառներում (бут) 0,15 %:

III ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ, ՍՊԻՐՏԱՎՈՐՎԱԾ ԶՐԵՐԻ ԵՎ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ

13. Կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների տեղափոխման ժամանակ բնական կորուստների առավելագույն չափերը (տեղափոխման ընթացքում արտադրանքի ընդհանուր ծավալի նկատմամբ՝ %-ներով) կազմում են՝

1) յուրաքանչյուր օրվա համար՝

ա. երկաթաղային և ջրային տրանսպորտով կաղնե տակառներում (ներառյալ բեռնումը և բեռնաթափումը)՝ 0,03*%.

բ. երկաթաղային և ջրային տրանսպորտով մետաղյա տարաներում (ներառյալ բեռնումը և բեռնաթափումը)՝ 0,007%.

գ. երկաթաղային ցիստեռներում՝ 0,0055%.

դ. ավտոմոբիլային տրանսպորտով կաղնե տարաներում (ներառյալ բեռնումը և բեռնաթափումը)՝ 0,008**%.

2) անկախ ճանապարհին գտնվելու ժամանակից՝

ա. ավտոմոբիլային տրանսպորտով կաղնե տակառներում (ներառյալ բեռնումը և բեռնաթափումը)՝ 0,10%.

բ. ավտոմոբիլային ցիստեռներում՝ 0.044%:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*) Արտադրանքը ճանապարհին ավելի քան ութ օր մնալու դեպքում բնական կորուստների առավելագույն չափերը հաշվվում են ոչ ավելի քան 0,24%:

**) Արտադրանքը ճանապարհին ավելի քան 10 օր մնալու դեպքում բնական կորուստների առավելագույն չափերը հաշվվում են ոչ ավելի քան 0,08%: